

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ «FELLOWSHIP» աշխատանքային ծրագրում ընդգրկվելու մրցույթ է հայտարարում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Կարդիոանեսթեզիոլոգիա՝ 1 տեղ
2. Կարդիոռեանիմատոլոգիա՝ 3 տեղ

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես որակավորված բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգները, այնպես էլ նշված մասնագիտությամբ ավարտական կուրսի կլինիկական օրդինատորները:

Թեկնածուներին առաջադրվող նվազագույն պահանջները.

1. Համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն:
2. Հայերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն:

Այդ պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ինքնակենսագրությունը («CV») ուղարկել [heart@nmmc.am](mailto:heart@nmmc.am) էլեկտրոնային հասցեով կամ անձամբ հանձնել ՆՄԲԿ-ի կադրերի տեսուչին (ք.Երևան, Նորք, Արմենակյան փ. 108/4, առաջին մասնաշենքի վարչական մաս):

Մրցույթի մասնակից հավակնորդները պետք է ներկայացնեն.

1. Դիմում (լրացվում է տեղում)
2. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները կամ նույնականացման քարտի պատճենը
3. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական և վերապատրաստման փաստաթղթերի (դիպլոմ, վկայական) բնօրինակները և պատճենները
4. Ինքնակենսագրություն («CV»)
5. 3x4 չափսի մեկ լուսանկար

Փաստաթղթերն ընդունվում են երկուշաբթի-ուրբաթ օրերին, ժամը 10:00-15:00 «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոնի կադրերի բաժնում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2018թ. մարտի 30-ն է:

Մրցույթը տեղի կունենա «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոնում 2018թ. ապրիլի 2-ին, ժամը 15:00-ին (ք.Երևան, Նորք, Արմենակյան փ. 108/4, առաջին մասնաշենքի կլինիկական մաս, երրորդ հարկ, գիտաժողովների դահլիճ):

Լրացուցիչ տեղեկության համար զանգահարել (010)65-59-80 կամ (093)24-48-61: